

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ**

**Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը
Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան**

**Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Զոչարյան**

**Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսա-
կան կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝
Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:**

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանա-կությանը, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակու-յամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այն-պես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կա-րող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակի-րառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հե-տաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիզեն Քոչարյան

“PERINCEK V. SWITZERLAND” գործով ՄԱԲԴՈՒԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ5

Լևոն Գևորգյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ18

Անի Միմոնյան

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ25

Արթուր Վաղարշյան

ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ35

Տարոն Միմոնյան

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ56

Ալվարդ Ալեքսանյան

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ68

Նարինե Դավթյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՓՈԽԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ87

Գևորգ Դանիելյան

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՅԻՆՆԱԼԻԶՄԻ (ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 140

Արա Գաբուզյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիրանյան

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА:
МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ 190

**“PERINCEK V. SWITZERLAND” ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒ
ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ**

Վիզեն Քոչարյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ինչպես հայտնի է, 2013 թվականի դեկտեմբերին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ կայացրեց *Դոգու Պերինչեկն ընդդեմ Շվեյցարիայի* գործով, որով համարեց, որ վերջինիս նկատմամբ տեղի է ունեցել խոսքի ազատության ապօրինի սահմանափակում: Այս վճիռը կարևորվում է նրանով, որ խնդրո առարկա են դարձել հայտնի թուրք ազգայնականի հակահայկական արտահայտությունները, մասնավորապես՝ հայոց ցեղասպանության ժխտումը: Շվեյցարական իշխանությունները քրեական պատասխանատվության են ենթարկել Պերինչեկին իր ռասիստական վարքագծի համար, ինչն էլ նա բողոքարկել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Մեր կարծիքով, չնայած նրան, որ, որպես այդպիսին գործը վերաբերում է կոնկրետ անձնավորության գործողությունների քրեաիրավական գնահատականին, բայց այս խնդիրը կարող է հիմնարար նշանակություն ունենալ ինչպես ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի ձևավորման համար, այնպես էլ Հայոց ցեղասպանության և դրա միջազգային իրավական գնահատականի ճանաչման գործնառնակ վրա: Ակնհայտ է, որ թուրքական քարոզչությունը անպայման կօգտագործի նշված վճիռը Հայոց ցեղասպանությունը ժխտելու և դրա ժխտման քրեականացումը խոչընդոտելու նպատակով: Ուստի անչափ կարևոր է այն, որ շվեյցարական կառավարությունը բողոքարկել է նշված վճիռը, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը համաձայնվել է այն ընդունել իր քննույթ-

յանը: Նույնպես ողջունելի է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը որոշել է հանդես գալ տվյալ գործում որպես երրորդ կողմ, ինչն անկասկած դատարանին հնարավորություն կընձեռնի ավելի բազմակողմանիորեն քննել գործը և կայացնել պատմական ճշմարտությանը և արդարությանը համապատասխանող վճիռ:

Այս պայմաններում կարևորվում է ՄԻԵԴ-ի կայացրած վճիռը՝ խոցելի կողմերի բացահայտումը, ինչը պետք է օգնի դատարանին՝ շտկելու կայացրած սխալը: Նախ կուզենայինք շեշտել, որ 2013-ին կայացած դատաքննությունը տեղի է ունեցել Թուրքիայի մասնակցությամբ, որը այդ գործում հանդես էր գալիս, որպես երրորդ կողմ: Մրցակցային դատավարության պայմաններում նշված հանգամանքը էական ազդեցություն է թողել կայացրած վճռի վրա, քանի որ վճիռներ կայացնելիս դատարանը պետք է ելնէր այն փաստարկներից, որոնք ներկայացնում են կողմերը դատաքննության ընթացքում:

Հիմնական փաստարկներից մեկը, որի վրա դատարանը հիմնել է իր վճիռը, այն է, որ թուրք ազգայնականը համապատասխան հայտարարություններ անելիս իբրև թե չի ունեցել ռասիստական դրդապատճառներ:

«112. ...Չնայած նրան, որ ներպետական դատարանները նրա այս դիտարկումները ավելի «ռասիստական» և «ազգայնական» են համարել, քան թե պատմական (Դաշնային դատարանի դիտ. 5.2, վերոնշյալ 13-րդ կետ), դիմումատուի հայտարարությունների և փաստարկների էությունը, այնուամենայնիվ, պատմության համատեքստում են գտնվում, ինչպես ցույց է տալիս, մասնավորապես, այն փաստը, որ միջամտություններից մեկն էլ տեղի է ունեցել 1923 թվականի Լոզանի պայմանագրին նվիրված գիտաժողովի ընթացքում: Բացի դրանից, դիմումատուն նաև որպես քաղաքական գործիչ է արտահայտվել այն հարցի մասին, որը վերաբերում էր պետությունների միջև եղած հարաբերություններին, այն է՝ մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Հայաստանի, պետություն, որի ժողո-

վուրդը զանգվածային ջարդերի և բռնի տեղահանությունների գոհ է դարձել: Ինչ վերաբերում է հանցագործության որակմանը, այս հարցը նույնպես իրավական բնույթի էր: Ըստ այդմ, դատարանը գտնում է, որ դիմումատուի ելույթը, ամենայն հավանականությամբ, պատմական, իրավական և քաղաքական բնույթի է եղել¹»:

Այս եզրահանգմանը հանգելուն դատարանին զարմանալիորեն չեն խանգարել դիմումատուի այն հայտարարությունները, որում նա իրեն Թալեաթ փաշա է անվանում², և որ երբեք չի փոխի իր դիրքորոշումը, նույնիսկ եթե մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի, որ Հայոց ցեղասպանությունը իրոք տեղի է ունեցել:³ Ակներև է, որ քաղաքակիրթ աշխարհում ցանկացած ոք, ով իրեն նույնացնի Հիտլերի, Հիմլերի կամ մի այլ ոճրագործի հետ, միանշանակ կճանաչվի ռասիստ և ծայրահեղական, սակայն Հայոց ցեղասպանությունը կամ ջարդերը (ըստ դատարանի) կազմակերպած Թալեաթի դեպքում դա «գտնվում է պատմության համատեքստում»: Իր մոտեցումները հիմնավորել ջանալով՝ դատարանը «փրկարար» փաստ է մեջբերում՝ խնդրո առարկա որոշ հայտարարություններ արվել են «1923 թվականի Լոզանի պայմանագրին նվիրված գիտաժողովի ընթացքում»: Ստացվում է, որ գիտաժողովների ընթացքում ռասիստական հայտարարություններ սկզբունքորեն չե՞ն կարող արվել: Պարզ չէ նաև, թե ինչպես է դատարանը պատկերացնում «գիտական բանավեճը» մի անհատի հետ, ով, Հայոց ցեղասպանությունը «միջազգային սուտ» կոչելով, հայտարարում է, որ երբեք չի փոխի իր (ռասիստական և հայատյաց) դիրքորոշումը անգամ այն դեպքում, երբ ապացուցվի հակառակը: Մի թե այսպիսին ըստ դատարանի պիտի լինեն «պատմական փաստերի վերաբերյալ բանավեճերը» կամ իրավական և քաղաքական բնույթի ելույթները:

¹AFFAIRE PERINÇEK c. SUISSE(Requête no 27510/08): Մեջբերվում է ըստ Վ. Քոչարյան, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում: Երևան: 2014, էջ 164:

²Նշվ. աշխ., կետ 88, էջ 151:

³Նշվ. աշխ., կետ 90, էջ 152:

Բացի դրանից դատարանը փաստորեն շեղվել է տարիների ընթացքում իր իսկ կողմից մշակված դատական պրակտիկայից, համաձայն որի՝ Եվրոպական դատարանը քննարկում է ոչ այնքան փաստացի հանգամանքներ, որքան իրավունքի և դրա մեկնաբանման հարցեր: Նշվածը հատկապես վերաբերում է քրեական դատավարության ընթացքում դատավորների մոտ ձևավորվող ներքին համոզմունքին առավել ևս, երբ խոսքը գնում է հանցագործության դրդապատճառների, հանցագործության սուբյեկտիվ կողմի մասին: Այդ պայմաններում անհասկանալի է, թե ինչ հիմքով է ՄԻԵԴ-ը կասկածի տակ դնում շվեյցարական արդարադատության մի քանի ատյանների կողմից կայացրած վճիռը՝ հնարավորություն չունենալով անգամ հարցաքննել Պերինչեկին: Այս առումով նաև հատկանշական է, որ տվյալ անձը մի քանի անգամ դատապարտված է եղել հենց իր ազգայնական և ծայրահեղական գործունեության պատճառով:

Դատարանը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության խնդրին, հակադրվում է շվեյցարական դատարանների կողմից արտահայտած այն համոզմանը, որ համընդհանուր համաձայնություն կամ կոնսենսուս գոյություն ունի 1915 և հետագա տարիների իրադարձությունները «ցեղասպանություն» որակելու վերաբերյալ, այն իրողությանը, որ «որ միջազգային քրեական իրավունքին նվիրված գրականությունում, մասնավորապես ցեղասպանությունների ուսումնասիրմանը վերաբերող, հենց Հայոց ցեղասպանությունն է ներկայացված որպես դրա «դասական» օրինակ(Դաշնային դատարանի վճիռ, դիտ. 4.2, վերոհիշյալ կետ 13):¹

Սակայն, ի հեճուկս դրան, իր դատողություններում դատարանը գալիս է մի խայտառակ և տարօրինակ «եզրահանգման», համաձայն որի, ըստ էության, Հայոց ցեղասպանության վերաբերյալ պատմական ճշմարտության հաստատումը և պատշաճ իրավական գնահատականը անհնարին են՝

¹Նշվ. աշխ., կետ 87, էջ 151:

«117. Ամեն դեպքում նույնիսկ կասկածելի է, որ կարող է «ընդհանուր կոնսենսուս» լինել մասնավորապես առանձնահատուկ այն իրադարձություններում, որոնք քննարկվող հարցն են կազմում, քանի որ պատմական հետազոտությունները հակասական են և վիճելի, որոնց վերաբերյալ հստակ եզրակացություններ կամ օրյեկտիվ ու բացարձակ ճշմարտություններ չեն տրվում (տե՛ս այս առումով Իսպանիայի Սահմանադրական դատարանի No 235/2007 վճռի վերոնշյալ 38-40 կետերը): Այս առումով, սույն գործը հստակ տարանջատում է Հոլոքոստը հերքելու հանցագործության վերաբերյալ գործերը (տե՛ս, օրինակ, *Robert Faurisson c. France* գործը, որոշված 1996 թվականի նոյեմբերի 8-ին՝ Միավորված ազգերի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից, ծանուցում թիվ 550/1993, փաստաթուղթ CGPR/C/58/D/550/1993 (1996)): Առաջին՝ դիմումատուներն այդ գործերում չեն վիճարկել գուտ մեկ հանցագործության իրավաբանական որակումը, այլ մերժել են պատմական փաստեր, երբեմն շատ կոնկրետ, օրինակ՝ գազի խցիկների գոյությունը: Երկրորդ՝ հերքվում էին նացիստական ռեժիմի կողմից կատարված հանցագործություններ, որոնք ունեն հստակ իրավական հիմք, այն է 1945 թվականի հուլիսի 8-ի Լոնդոնյան համաձայնագրով կազմավորված Միջազգային զինվորական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածի վերոհիշյալ 19-րդ կետը: Երրորդ՝ շահագրգիռ անձանց կողմից կասկածի տակ առնված պատմական փաստերը քննվել են հստակ սահմանված միջազգային արդարադատության դատարանի կողմից»¹:

Ներկայացված պարբերությունում դատարանի կողմից իրականացվող Հայոց ցեղասպանության «հստակ տարբերակումը» Հոլոքոստից ոչ այլ ինչ, քան երկակի չափանիշների խտրական կիրառում չի կարելի գնահատել: Այդ ենթատեքստում դատարանը նշում է, որ, ի տարբերություն Հոլոքոստի ժխտման հետ կապված գործերի, սույն գործով դիմումատուն իբրև թե չի ժխտել պատմական

¹ Նշվ. աշխ., կետ 117, էջ 165:

փաստերը, այլ ժխտել է միայն նրանց իրավական գնահատականը: Դատարանի այս մոտեցումը ոչ մի կերպ արդարացված և հիմնավոր չենք կարող համարել, քանի որ իրավական գնահատականները ամեն դեպքում պետք է բխեն հենց պատմական փաստերից և մերժելով խնդրո առարկա իրադարձությունները ցեղասպանություն համարելը՝ դիմումատուն ժխտել է նաև «շատ կոնկրետ» պատմական իրողությունը՝ թուրքական կառավարության նպատակը՝ մեկընդմիջտ «լուծել» հայկական հարցը հայերի զանգվածային ոչնչացման միջոցով:

Էլ ավելի մտահոգիչ է դատարանի՝ Հոլոքոստից «հստակ տարբերակելու» մյուս փաստարկը, այն, որ, ի տարբերություն Հայոց ցեղասպանության, Հոլոքոստին վերաբերող «պատմական փաստերը քննվել են հստակ սահմանված միջազգային արդարադատության դատարանի կողմից»: Դատարանի կողմից այս «տարբերակումը» կարելի է գնահատել որպես անհեթեթ և, հաշվի առնելով Եվրոպական դատարանի վճիռների նախադեպային ուժը նաև վտանգավոր, քանզի ստացվում է, որ որևէ պատմական փաստ կամ նրան տրված իրավական գնահատական գոյություն ունենալ չի կարող, եթե այն չի քննվել «միջազգային արդարադատության դատարանի կողմից»: Ակներև է, որ նման մոտեցումը լուրջ չի կարող ընկալվել: Բացի դրանից դատարանի կողմից որդեգրված այս մոտեցումը շատ խոցելի է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, և տպավորություն կարող է ստեղծվել, որ Եվրոպական դատարանը մոռացել է իր հիմնական առաքելությունը: Դատապարտելով ցեղասպանությունները՝ միջազգային հանրությունը ելնում է նախ և առաջ զոհերի և նրանց սերունդների պաշտպանության դիրքերից, և ինչքանով է հիմնավորված կամ բարոյական նման պաշտպանության բացակայությունը հիմնավորել նույն միջազգային հանրության անկարողությամբ կազմակերպելու նման դատավարություններ: Ցեղասպանության զոհերը չեն կարող պատասխանատու լինել այդ ցեղասպանությունը դատապարտող միջազգային աստիճանի բացակայության համար: Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը,

ապա պետք է շեշտել, որ մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար միջազգային պատասխանատվության գաղափարի առաջադրումը ուղղակիորեն կապված է հենց 1915 թվականի իրադարձությունների հետ: 1915 թվականի մայիսի 15-ի Տրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի համատեղ հռչակագրում միջազգային հարաբերությունների պրակտիկայում առաջին անգամ ամենաբարձր մակարդակով հիշատակվեց «մարդկության դեմ հանցագործություն» հասկացությունը և հայտարարվեց, որ համապատասխան տերությունները «պատասխանատվության են ենթարկելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին և այդ ջարդերում ներգրավված նրանց գործակալներին»¹: Արդյոք այն, որ ինչ-ինչ պատճառներով, բայց հաստատապես ոչ ցեղասպանության գոհերի և դրանց ժառանգների մեղքով այդ ողջունելի մտադրությունը չհաջողվեց կյանքի կոչել, պետք է որևէ կերպ ազդի այդ ոճրագործության պատմական իրողության կամ իրավական գնահատականի վրա: Կարծում եմ՝ պատասխանը միանշանակ է, և Եվրոպական դատարանը պետք է հրաժարվի նման հիմնադրվել և խտրական մոտեցումներից:

2013 թվականի իր վճռով դատարանը թույլ է տվել նաև մեկ այլ խտրական մոտեցման դրսևորում: Նույնպես զուգահեռներ անցկացնելով Հոլոքոստի հետ՝ դատարանը «... կիսում է թուրքական կառավարության կարծիքը, որի համաձայն Հոլոքոստի հերքումն այսօր հակասեմիտականության հիմնական շարժիչն է: Իրականում նա գտնում է, որ այն վերաբերում է մի երևույթի, որը կրկին արդիական է, և ընդդեմ որի միջազգային հանրությունը պետք է ամուր և զգոն կանգնի: Չենք կարող հաստատել, որ «ցեղասպանության» իրավաբանական որակման հերքումը 1915 թվականին և դրան հաջորդող տարիներին տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների ժխտումը կարող է նույն ազդեցությունն ունենալ»²:

¹ Նշվ. աշխ., էջ 9:

² Նշվ. աշխ., կետ 119, էջ 166:

Ծանրագույն միջազգային հանցագործությունը ժխտող Թուրքիայի կառավարության երկակի չափանիշներով և խտրականության մեջ նման դիրքորոշումը «կիսելը» պատիվ չի կարող բերել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող ամենահեղինակավոր միջազգային ասոյանին: Եթե անգամ մի պահ անտեսենք այդ դիրքորոշման խտրական էությունը, ապա մինչև նույն է այն անընդունելի է, քանի որ չի համապատասխանում իրականությանը: Հայոց ցեղասպանության ժխտումը հայաստացույցության (արմենոֆոբիա) կենտրոնական տարրն է, որով առաջնորդվում են ոչ միայն թուրքական ծայրահեղ ազգայնականները և ահաբեկիչները, այլ Թուրքիայի ամբողջ պետական մեքենան և պաշտոնական քարոզչությունը: Որպես օրինակ կարելի է հիշատակել Թուրքիայի ներկայիս նախագահ Էրդոհանի հայտարարությունը, որով նա վիրավորանք է համարում «հայ» անվանելը:¹ Նույն հայաստաց գաղափարական արմատներից են սնվում նաև մի շարք ահաբեկչական դրսևորումներ, այդ թվում 2007 թվականին հայտնի հայ լրագրող Հրանտ Դինքի սպանությունը: Հայոց ցեղասպանության ժխտումը մեկ այլ պետության՝ Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնաքարերից մեկն է²: Եվ դա պատահական չէ, քանի որ հենց այդ պետությունում հայաստացույցությունը վերածված է պաշտոնական պետական քաղաքականության, ինչի մասին են վկայում նույն Եվրոպայի խորհրդի մեկ այլ հեղինակավոր ասոյանի՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) զեկույցները³: Այսպիսով՝ այս ամենը անտեսելով և թուրքական պարզագույն դեմագոգիկ հնարքի հետ համամիտ լինե-

¹ Տե՛ս <http://www.washingtonpost.com/blogs/worldviews/wp/2014/08/06/is-armenian-an-insult-turkeys-prime-minister-seems-to-think-so/>

² Տե՛ս օրինակ, <http://azeridaily.com/politics/653> կամ <http://en.president.az/articles/11533>

³ Տե՛ս First report on Azerbaijan (adopted on 28 June 2002), Second report on Azerbaijan (adopted on 15 December 2006), Third report on Azerbaijan (adopted on 23 March 2011), http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/Country-by-country/Azerbaijan/Azerbaijan_CBC_en.asp

լով՝ Եվրոպական դատարանը թույլ է տվել ինչպես սկզբունքային, այնպես էլ փաստային լրջագույն սխալ, որը պարտադիր ենթակա է ուղղման:

Բացի վերը նշվածից դատարանը իր վերին աստիճանի կասկածելի վճիռը հիմնել է մի շարք այլ անընդունելի փաստարկների վրա: Մասնավորապես, դատարանը գտնում է, որ իբր գոյություն չունի գերակա հանրային շահ և հրատապ սոցիալական անհրաժեշտություն քրեականացնելու ցեղասպանությունների ժխտումը:

«129. Հաշվի առնելով շարադրվածը և հատկապես, համեմատական իրավունքի տարրերի լույսի ներքո՝ դատարանը գտնում է, որ ազգային իշխանությունների կողմից դիմումատուին դատապարտելու համար առաջ քաշված պատճառաբանություններից ոչ բոլորն են տեղին և, միասին վերցված, բավարար չեն: Ներպետական մարմինները չեն ցուցադրել մասնավորապես այն, որ դիմումատուի դատապարտումը հանդիսանում է «հանրային գերակա շահ» կամ այն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում 1915 թվականին և հաջորդող տարիներին վայրագությունների զոհերի հետնորդների պատվի և զգացմունքների պաշտպանության համար: Ներպետական մարմինները գերազանցել են իրենց օժտած հայեցողությունների սահմանը, որը վերաբերում է որոշակի հանրային շահի ներքո գտնվող բանավեճին»¹:

Այս եզրահանգումը, որում ամփոփված է կայացրած վճռի էությունը, դատարանը, բացի վերը շարադրած մոտեցումներից - հիմնավորում է նաև նրանով, որ ոչ բոլոր պետություններն են ճանաչել կամ քրեականացրել Հայոց ցեղասպանության ժխտումը: Փորձելով ավելի համոզիչ դարձնել իր դիրքորոշումը՝ դատարանը «համեմատական իրավունքի լույսի ներքո» վկայակոչում է² Իսպանիայի Սահմանադրական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 7-

¹ AFFAIRE PERİNÇEK c. SUISSE(Requête no 27510/08): Մեջբերվում է ըստ Վ. Քոչարյան, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում. Երևան: 2014, էջ 169:

² Նշվ. աշխ., կետեր 121, 122, 123, էջ 167-168:

ի վճիռը (No 235/2007) և Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի 2012 թվականի հայտնի վճիռները: Նպատակ չունենալով սույն անդրադարձում նշված փաստաթղթերի առանձին վերլուծություն կատարել, նշենք միայն, որ անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի կարող կաշկանդված լինել առանձին պետությունների մարմինների դիրքորոշմամբ, այլ հակառակը, վերջիններս պարտավոր են իրենց մոտեցումները համապատասխանեցնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին: Այս պարզ ճշմարտությունը անշուշտ գիտակցում էին նաև քննարկվող դատական վճռի հեղինակները, որոնք հատուկ նշել են, որ նշված վճիռները «ձևականորեն չեն վերաբերում իր պահանջած նախադեպերին», սակայն ոչ հստակ պատճառներով «դատարանը չէր կարող անտարբեր մնալ այդ զարգացումների նկատմամբ»¹:

Ինչ վերաբերում է նրան, որ ոչ բոլոր պետություններն են ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ապա դատարանի նման հարցադրումը, մեղմ ասած, զարմանք հարուցող կարելի է համարել: Արդյոք կա՞ միջազգային իրավունքում որևէ կերպ ձևակերպված և բոլոր պետություններին ուղղված պահանջ ճանաչելու բոլոր ցեղասպանությունները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը: Արդյոք ցեղասպանության իրողությունը պետք է լուծվի պետությունների «ձայների մեծամասնությամբ», իսկ եթե այո, ապա ի՞նչ մեծամասնության պետք է լինի՝ պա՞րզ, թե՞ որակյալ: Նման մոտեցման անհեթեթությունն էլ ավելի է ընգծվում այն փաստով, որ առկա են ընդամենը երկու պետություն, որոնք պաշտոնապես ժխտում են Հայոց ցեղասպանությունը: Խոսքը գնում է Թուրքիայի և Ադրբեջանի մասին, որոնք, ինչպես արդեն իսկ ներկայացվեց, հայատյացությունը դարձրել են համապատասխանաբար իրենց կիսապաշտոնական և պաշտոնական քաղաքականության հիմք:

¹ Նշվ. աշխ., կետ123:

Ըստ ընդունված որոշման՝ ՄԻԵԴ-ի կարծիքով չկա ոչ մի անհրաժեշտություն սահմանելու քրեական պատասխանատվություն ցեղասպանությունները ժխտելու համար: Դատարանի նման պնդումը հատկապես աղաղակող է մեր օրերում, երբ, ցավոք սրտի, ցեղասպանություն երևույթը զուտ պատմական չէ, և այդ աղետալի ոճրագործությանը մենք ականատես ենք ժամանակակից Միջին Արևելքում:

Անընդունելի և անհասկանալի կարելի է անվանել դատարանի այն պնդումը, թե իբր ցեղասպանությունները ժխտելու համար քրեական պատիժ սահմանելու «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտություն» գոյություն չունի: Անհրաժեշտ է շեշտել, որ նման պահանջ պարունակում է Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հանձնաժողովի կողմից դեռևս 2003 թվականին ընդունված և բոլոր Եվրոպական պետություններին ուղղված Ընդհանուր քաղաքական երաշխավորագիրը¹, որը նվիրված է ռասիզմի դեմ ուղղված ազգային օրենսդրության նվազագույն չափորոշիչներին: Սույն տողերի հեղինակը պատիվ ունի հանդիսանալ նշված մարմնի անդամ և անձամբ իր մասնակցությունն է բերել նշված որոշման մշակմանը և ընդունմանը: Նշված փաստաթղթի չորրորդ՝ «Քրեական օրենսդրություն» բաժնի 18-րդ կետը ուղղակի նախատեսում է, որ «օրենքը պետք է հետապնդի և պատիժ սահմանի կանխամտածված և ռասիստական դրդումներով կատարված ցեղասպանության հանցագործության, մարդկության դեմ հանցագործությունների և ռազմական հանցագործությունների հանրային ժխտումը, արդարացումը կամ նշանակության նվազեցումը»: Հատկանշական է, որ ի սկզբանե այդ փաստաթղթի նախագիծը նախատեսում էր նման դրույթ սահմանել միայն Հոլոքոստի վերաբերյալ, սակայն հետագա բանավեճի արդյունքում պարզ դարձավ երկակի չափանիշների անընդունելիությունը, և Հանձնաժողով

¹ ECRI General Policy Recommendation No.7: National legislation to combat racism and racial discrimination, տես http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/activities/GPR/EN/Recommendation_N7/default_en.asp

վը եկավ վերոհիշյալ որոշմանը: Պարզ չէ, թե ինչպես Եվրոպայի խորհրդի մարմինը նման պահանջ կարող էր ուղղել պետություններին՝ անհրաժեշտ սոցիալական անհրաժեշտության բացակայության պայմաններում: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ վերջին տարիներում ՄԻԵԴ-ի պրակտիկայում գնալով ավելանում են դեպքերը, երբ դատարանը իր վճիռները հիմնավորում է Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հանձնաժողովի փաստաթղթերի հղումներով: Համապատասխանաբար միայն տարակուսանք կարող է առաջացնել այն հանգամանքը, որ խնդրո առարկա վճիռը կայացնելիս դատարանը փաստացի անտեսել է Եվրոպայի խորհրդի հեղինակավոր կառույցի վերոշարադրյալ սկզբունքային մոտեցումը:

Ընդհանուր առմամբ գտնում եմ, որ Պերինչեկի գործով ՄԻԵԴ-ի կայացրած վճիռն անհիմն և խոցելի է, ըստ էության անընդունելի և վտանգավոր դատական սխալ է: Այս առումով պատահական չէ այն հանգամանքը, որ փաստացի այդպիսի վճիռ ընդունելուն կողմ է եղել դատարանական կազմի փոքրամասնությունը, քանի որ յոթ դատավորներից չորսը ներկայացրել են հատուկ կարծիք: Մնում է հուսալ, որ պատշաճ նախապատրաստական աշխատանքների և հստակ իրավական դիրքորոշումների մշակման և համակարգված ներկայացման պարագայում ՄԻԵԴ-ի Վերին պալատում 2015 թվականի ընթացքում սպասվելիք կրկնակի քննության արդյունքում հնարավոր կլինի ապահովել արմատապես այլ որակի, իրավունքին և իրականությանը համապատասխանող վճիռ:

¹ St' u Kocharyan B.V. Проблемы формирования европейских стандартов в области борьбы с дискриминацией и нетерпимостью | Современные проблемы совершенствования правового регулирования: национальные и международные правовые аспекты. Сборник материалов международной научно-практической конференции, посвященная 80-летию создания юридического факультета ЕГУ, Изд. дом "Тигран Мец", Ереван, 2013, էջեր 145-159:

ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ РЕШЕНИЯ ЕВРОПЕЙСКОГО
СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА ПО ДЕЛУ
“PERINCEK V. SWITZERLAND” ОТ 17 ДЕКАБРЯ 2013 ГОДА

Виген Кочарян
*Заведующий кафедрой европейского и международного права ЕГУ,
канд. юрид. наук, доцент*

В статье предпринята попытка критического анализа решения Европейского суда по правам человека по делу “Perincek v. Switzerland”. Отмечается неоднозначность и сомнительность аргументации суда и применение “двойных стандартов”, что привело к принятию ошибочного решения.

PROBLEMATIC ASPECTS OF THE JUDGMENT
(DECEMBER 17, 2013) OF THE ECHR ON “PERINCEK V.
SWITZERLAND” CASE

Vigen Kocharyan
*Head of the YSU Chair of European and International Law,
Candidate of Legal Sciences, Docent*

The ECHR judgment on “Perincek v. Switzerland” case is discussed in the article. The critical analysis of Court’s argumentation shows ill-founded conclusions and use of “double standards” which led to the adoption of erroneous judgment.

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Թուրքիա, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Պերինչեկ, խտրականություն, հայատյացություն, Հոլոքոստ:

Ключевые слова: Геноцид армян, Турция, Европейский суд по правам человека, Перинчек, дискриминация, арменофобия, Холокост.

Keywords: Armenian Genocide, Turkey, European Court of Human Rights, Perincek, Discrimination, Armenophobia, Holocaust.

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ
ԶԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ

Լևոն Գևորգյան
*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ,
իրավ. գիտ. թեկնածու*

Միջազգային իրավունքում հարկադրման ուղղահայաց մեխանիզմների բացակայությունը և միջազգային իրավունքի հորիզոնական բնույթը բազմիցս առիթ են հանդիսացել վերջինիս ոչ արդյունավետության քննադատման համար: Այս ելակետային խնդիրը 20-րդ դարի վերջից և 21-րդ դարում պատճառ է դառնում մի նոր երևույթի, ինչպիսին է տարբեր միջազգային դատական ատյանների օգտագործումը անուղակիորեն վերջիններիս իրավագործության մեջ չմտնող հիմնահարցերի քննարկման և այդ հարցերին գնահատական տալու համար:

Նման շահարկման թերևս առաջին օրինակներից մեկը նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (ատյան, որը ստեղծվել է ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության համար) օգտագործումն էր միջազգային իրադարձությունների պետությունների ունեցած դերակատարությանը գնահատական տալու նպատակով: Վերջինիս առաջին իսկ գործի շրջանակներում՝ *Մեղադրողն ընդդեմ Դուսկո Տադիչի*¹, քննարկվեց Բոսնիա-Հերցեգովինայի տարածքում ստեղծված և գործող սերբական զինված ուժերի կապը Սերբիայի պետության հետ: Թեև դա իրականացվեց մարդասիրական իրավունքի կիրառելի նորմերի հստակեցման նպատակով՝ զինված ընդհարման բնույթի գնահատման և ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության համատեքստում, այնուամենայնիվ՝ նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի գնահատականն ուներ նաև իր հետևանքներ:

¹ *Prosecutor v. Dusko Tadić*, Case no. IT-94-1-T (7 May 1997).